«10» մայիս 2024թ.

ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

ՈՐՈՇՈՒՄ N 2564-2-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Տիգրան Գավուրմաջյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 12677/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ ֆիզիկական անձ Տիգրան Գավուրմաջյանի (Հասցե՝ ք. Երևան, Բուդաղյան փ., ՀՎՀՀ՝ 20084993, անձնագիր՝ ԱԵ0564005) չկատարված հարկային պարտավորությունը 03.05.2021թ. դրությամբ կազմել է 2.606.735 դրամ, որից հարկ՝ 2.593.250 դրամ, տույժ՝ 13.485 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, «բ» կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում 09"09"2021 թվականին հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Վարչական վարույթի շրջանակներում Տիգրան Գավուրմաջյանը պատշաճ ծանուցվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի, ինչպես նաև փոստային կապի միջոցով, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Վերոնշյալ պարտավորությունը գանձելու նպատակով 22.09.2021թ-ին ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է <ֆիզիկական անձի կողմից չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին> թիվ 2564-Ա որոշումը:

13.10.2021թ. ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից վարչական ակտում փոփոխություն կատարելու վերաբերյալ կայացվել է թիվ 2564-Ա-1 որոշումը, համաձայն որի ֆիզիկական անձ Տիգրան Գավուրմաջյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցվել է, մինչև կասեցման համար հինք հանդիսացող հանգամանքի վերանալը, նկատի ունենալով, որ Տիգրան Ռաֆայելի Գավուրմաջյանը 09.03.2021թ-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ 19.09.2020 թվականին Տիգրան Ռաֆայելի Գավուրմաջյանի և <ՈՍԿԵ ԿԱՄՈՒՐՋ> ՍՊԸ-ի միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով ստացվող եկամտի մասով ֆիզիկական անձի մոտ տարեկան հաշվարկ ներկայացնելու և եկամտային հարկ վճարելու իրավահարաբերության բացակայությանը ճանաչելու պահանջի մասին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 03.05.2022թ. թիվ ՎԴ/1926/05/21 վարչական գործով կայացված վերջնական դատական ակտով Տիգրան Գավուրմաջյանի հայցը բավարարվել է, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49 հոդվածի 3-րդ մասով և 50-րդ հոդվածի 2-րդ մասի <բ> կետով՝

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Տիգրան Ռաֆայելի Գավուրմաջյանի նկատմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել և կարճել:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝
Իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին
Արեգա Պարսեղյան
հեռ.՝ 010-309-191 (9136)

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am